ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
«ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Հեռ. 010 51 59 40

«19» մայիսի 2025թ. No 01/181

<<Մեծ ծիածան>> ՍՊԸ /ՀՎՀՀ 00103837

ք. Երևան, Վ. Համբարձումյան 91

ԾԱՆՈՒՑՈՒՄ

պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

<<Սպասարկում>> ՊՈԱԿ-ի և <<Մեծ ծիածան>> ՍՊԸ-ի միջև 2025 թվականի մարտի 03-ին կնքված Պետության կարիքների համար ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-25/01-9 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը ըստ պայմանագրի հավելված 1-ի պետք է մատակարարեր օդի թարմացուցիչ՝ նախատեսված ավտոմատ սարքի համար, կահույք մաքրող միջոց և մաքրող միջոցներ:

Ըստ պայմանագրի, նույն հավելվածի՝ ապրանքները պետք է մատակարարվեր պատվիրատուի կողմից պահանջը ձևավորելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում 2025 թվականի 2-րդ եռամսյակում:

<<Սպասարկում>> ՊՈԱԿ-ի կողմից ապրանքները մատակարարելու վերաբերյալ նամակը ուղարկվել է 2025 թվական ապրիլի 18-ին, Ձեր ընկերության ciacanmarket@gmail.com էլ. փոստի հասցեին, բայց Ձեր ընկերության կողմից ապրանքները չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով պայմանագրի 2.1.7 կետով՝ միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը և պայմանագրի 2.1.7.1 կետի Բ ենթակետը՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հայտնում եմ Ձեզ, որ <<Սպասարկում>> ՊՈԱԿ-ի կողմից պայմանագիրը միակողմանի լուծվում է:

Առաջարկում եմ 10 օրացույցային օրվա ընթացքում պայմանագրի շրջանակներում Ձեր կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները փոխանցել <<Սպասարկում>> ՊՈԱԿ-ի 900018005125 գանձապետական հաշվին, այլապես ստիպված կլինենք Ձեր ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց սկսել:

Հարգանքով՝ Տ. Գեղամյան

կատարող՝

գնումների կազմակերպման բաժին,

պետ Գ. Մկրտչյան, հեռ.+37410515489